

Երուսաղէմի այնչափ տաղտուկը, այնչափ ծանր պարտքերն եւ նեղութիւնները սիրով տանելու:

Կոլոտ դժուարութիւն ցոյց տուաւ ոչ թէ գործէ փախչելու համար, այլ առարկեց թէ Պոլսոյ պատրիարքութիւնը բնաւ ապահով չէր ո՛նեւ պատրիարքի համար. քանի որ յաճախակի փոփոխութիւններ, բարձի գահի յափշտակութիւններ սովորական գործողութիւններու կարգն անցած էին: Ի՞նչ պիտի ընէր եթէ քանի մ'ամիս կամ տարի մ'ետքը բռնադատուէր հրաժարելու. Երուսաղէմի պարտքերուն այս արի երաշխաւորին ո՞վ երաշխաւոր պիտի ըլլար: Գործ, անկեղծութիւն, խաղաղութիւն սիրող սիրտ մը բնաւ համ չառներ ասոնք խանգարող ո՛նեւ պարագայէ: Մեծահաւատ Մահտեսիներու հաստատ խոստումն ու առաջադրութիւնը փարատեցին Կոլոտին վարանումներն ու կասկածները: Գանձակեցի պատրիարքը խոհեմաբար տեղի տուաւ այն ընտիր եւ զօրաւոր ժողովըրդականութեան, որ Կոլոտը կը բարձրացընէր Պոլսոյ պատրիարքական Աթոռին վրայ:

Յովհաննէս Կոլոտ հաւանեցաւ եւ 1715 Սեպտեմբեր 9 Ուրբաթ օրը, դեռ 37 տարեկան վարդապետ մը, նստաւ Պոլսոյ պատրիարքական Աթոռը: Նախապէս եղած ծանուցումի համեմատ իր պատրիարքութեան հետեւեալ օրն իսկ, Սեպտ. 10 Էր. պատարագ մատուցանել տալով Մայրաքաղաքի եկեղեցիներուն մէջ “եւ ի պատարագն յիշատակել Սուրբ Երուսաղէմի պատրիարք զՏէր Գրէգոր Աստուածաբան Վարդապետն:” Այս յիշատակութիւնը ուրախութեան արցունքներ կաթեցուց բարեպաշտ եւ նախանձախնդիր աշգերէն:

Առանց երկար թարթափումներու, առանց անհոգի ձեւակերպութիւններու՝ մէկ կողմէն հայ Վարդապետի մը անկեղծ գործունէութիւնն ու խոհեմութիւնը, միւս կողմէն գործ տեսնելու փա-